

# ԱՆՔՆԵՐ



“ՓՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1889

ԹԻՒ 9

## ՄԵԼՊՈՐՆ

Մեր վերջին երկու թերթերուն մէջ դրինք Արևմտեան Աւստրալիոյ երկու քաղաքաց պատկերները: Այժմ կ'անցնինք յիշեալ ցամաքին հարաւային արևելեան անկիւնը վիքթորիա գաւառը, որ է ամենէն փոքրը և նոյն ժամանակ ամենէն բազմամարդը հինգ գաւառաց որոց բաժնուած է Աւստրալիա: Անոր մայրաքաղաքը, Մելբորն, ունի 380,000 բնակիչ, և կը պարծի իբրև ամենէն բազմամարդ քաղաքը Հարաւային կիսագնդոյն մէջ: Բնակիչք կը սիրեն կոչել զայն “Հարաւոյ թագուհի քաղաք:”

Թէ՛ քաղաքին և թէ՛ գաւառին զարգացումը զարմանալի եղած է: Թէպէտ Անգղիական նաւեր յաճախ կը հանդիպէին հոն, սակայն գաւառին մէջ գաղթականութիւն չսկսաւ հաստատուիլ մինչև 1835: Կար սխալ գաղափար մը թէ տեղոյն ջուրերը խմելու անյարմար էին, և թէ հողը անպիտան էր, և ուստի նախկին գաղթականք կ'երթային ուրիշ գաւառներ:

Երբ հասկցուեցաւ թէ այս գաղափարք էին անհիմն, այն ատեն սկսաւ գաղթականութիւնը հոն ևս, և արագ աճեցաւ մինչև 1851, և ահա այն ժամանակ ոսկոյ հանքաց գիւտը մեծ բազմութիւններ քայեց հոն: 1851է մինչև 1886 իբր 240 միլիոն լիբրայի արծէքով ոսկի հանուեցաւ յիշեալ գաւառէն, որ ունի նաև անագի ընտիր հանքեր:

Կլիման ամենէն լաւն է յԱւստրալիա, վասն զի հասարակածէն դէպ հարաւ ինկող ամենէն հեռաւոր մասն է: Երկրին մեծ մասն է բարեբեր, վասն զի պարարտացած է այժմ մարած բայց դարերով առաջ վառ եղող հրաբուխներէ:



ՄԵԼՊՈՐՆ

ներէ հասած լավայէն: Յիշեալ հրաբուխք կը վերաբերին Աւստրալիական Ալպեանք կոչուած լեռանց, և անոնցմէ ունանք 7,000 տոբ բարձրութիւն ունին: Մեր առջևի պատկերը կը ներկայացունէ սպարանքը կառավարչին որ կը դրուի վիքթորիա թագուհիէն: Բայց տեղոյն խորհրդարանի անգամը կ'ընտրուին ժողովրդեան ձեռամբ, որ ինքնօրէն կը կառավարուին ներքին ամէն խնդիրներու մէջ:

ՓՈՒՔՐԻԿ ՏՂԻ ՄԸ ՔԱՋՈՒԹԻՒՆԸ  
Գեղեցիկ դէպք մը կը պատմուի լրագրի մը մէջ թէ փոքրիկ աղայ մը

ինչպէս իմացուց իւր մօր՝ անոր մեռնելու մօտ բլլալը, մինչ տան մէջ գտնուողներէն ոչ ոք կարող էր ունենալ այդ ցաւայի պարտականութիւնը կատարելու քաջութիւնը:

Տղան վեր առաւ իւր աշուրները գերքին վրայէն որոյ հետ կը խաղար. և մինչ քովը գտնուողներէն ոչ ոք կը դիտէր զնա, հարցուց ծանրութեամբ, “Մայրիկս պիտի մեռնի:” Յետոյ առանց պատասխանի սպասելու շուտով դուրս վազեց սենեակէն և սանդուխէն վեր ելաւ արագութեամբ որչափ որ իւր փոքրիկ ոտուրները կրնային շարժիլ: Բարեկամք և դրա-

ցիք չըջապատած էին հիւանդ կնոջ անկողինը: Աստուք զարմանալով տեսան որ աղին երեսին գոյնը դեղնած էր երբ սողակերով երաւ անկողնոյն վրայ և դրաւ իւր փոքրիկ ձեռքը իւր մօր բարձին վրայ: «Մայրիկ, հարցոյց անուշիկ ձայնով մը, «մեռնե՞րէ կը վախնաս?»

Մայրը անոր նայեցաւ իսկոյն, թե՛րևս ինքն ալ արդէն կը խորհէր այդ բանին վրայ, և ըսաւ տկար ձայնով, «Չարլի, մի՛ վրաս քեզի:» «Տըթթիք, հայրիկս, մեծ մայրս, և ամէն մարդ,» շշնեց պզտիկ: «Սիրելի մայրիկ, մի վախնար մեռնելէ: կը վախնաս:» «Ո՛չ, Չարլի,» ըսաւ ծաղկահասակ մայրը, հեծովեան սաստիկ հառաչանք մը արձակելով. «ոչ, մայրիկդ չվախնար մեռնելէ:» «Հիմա ամուր բռնէ ձեռքս, գոյէ աչուրն երդ որ մութ ըլլայ, և երբ կը բանաս զանոնք, մայրիկ, ամէն բան լոյս պիտի ըլլայ հան:»

Մինչ ընտանեաց անգամները ստակու մէ բռնուած կը կենային անկողնոյն շուրջը, Չարլի բերնին դրաւ իւր փոքրիկ ձեռաց մատը և ըսաւ, «Լուծի՛ւ թիւն. մայրիկս կը քնանայ: Ալ պիտի չարթննայ հաս:»

Եւ իրօք ալ այնպէս եղաւ: Այն ատեն ոչ սրտածակիկ Միւք բարովը ըսուեցաւ, և ոչ բաժանման միջոց արժարժեցաւ. վասն զի երբ ծաղկահասակ մայրը արթնցաւ իւր քնէն, արդէն հասած էր հանդերձեալ աշխարհը, ինչպէս փոքրիկ Չարլի ըսաւ. «ամէն բան լոյս էր հան:»

ՇԻՅՈՒՆԻ ԲԵՐԿԸ

Պատկերին ներկայացուցած բերդը կրգ անուի ձինեկրայի լճին վրայ, և հռչակաւ որ է գլխաւորապէս սա պատճառաւ որ հոն բանասրկուեցաւ Ֆրանսոս ար Պաննիփար: Պաննիփար ծընու 1496ին, և երբ դեռ շատ փոքր էր, մեծաւոր կարգուեցաւ ձինեկրայի պարիսպներէն ճիշդ դուրսը գանուող վանքի մը: Ետ ձենավայոց կուտակից եղաւ ընդդէմ Սափալայի գրքին որ կ'ուզէր իւր իշխանութիւնը հաստատել քաղաքին և այն դուռուին վրայ: Պաննիփար 1519ին ինկաւ յիշեալ ԳԸԲ սին ձեռքը և երկու տարի բանասրկուեցաւ. յետոյ նորէն դարձաւ մառուայել ձենավայոց հանրապետութեան: 1539ին գերի բռնուեցաւ աւազակներէ որոնք դարձեալ մասնեցին դնա Սափալայի գրքին ձեռքը: Այս ժամանակ էր որ Պաննիփար բանասրկուեցաւ Շիյոնի բերդին մէջ, ուր ֆրանց վեց տարի: Հռչակաւ որ Մեղդիտային, Լորա Պայրըն, գրած է բանաստեղծութիւն մը որոյ մէջ կը ներկայացունէ զՊաննիփար բանասրկուած իւր երկու եղբարց հետ, որք կը մեռնին իրարու ետեւէ և զնա կը թողուն մինակ սարդերուն և մուկերուն հետ: Կ'ըսէ աւոր բերնէն, «Եւ այն իսկ իմ չղթ աներս և

եւ բարեկամ եղանք:» Պաննիփար ազատ արձակուելէն ետքը ապրեցաւ շատ տարիներ և Հանրապետութենէն հանդրատեան թոշակ ընդունեց մինչև իւր մահը: Պաննիփար գրեց ձինեկրայի մէկ պատմութիւնը, աշխատասիրեց նաև ուրիշ գործեր, և իւր մահուան տանը թողուց քաղաքին շատ մը գիրքեր որք եղան ձինեկրայի գրաստան սկզբնաւորութիւնը:

ԹԻՉՈՒՆԷ ՄԸ ԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ

Քանի մարդիկ արդեօք հետագայից նման պարագաներու տակ ուշադրութիւն պիտի ընէին խեղճ թուշուներն և անոր փոքրիկ ձագերուն:

Էտուրրա ֆորլիս, ֆորլիս կոչուած մեքենային հնարիչը, երբ իւր գործանոցին շէնքին վրայ յաւելուած շէնք մը կառուցանելու համար անոր հիմք պիտի գնէր, հարկ տեսաւ որ վառօդով պայթեցունէր հոն գրանուած ժայռ մը: Գործանոցները կանչուած էին, շէնքին նիւթները պատրաստու-

ձեռք զարնենք տեղէն վերցունել, և եթէ յաջողինք անգամ, հաւանական չէ որ թուշուներ նորէն երթայ նստի ուրիշ տեղ մը: Մենք հիմա բաւական յառաջ տարած ենք գործը. կրնանք քակել բոյնը և հաւկիթները նետել:» «Ո՛չ, մենք պէտք չէ որ արենք թուշուներն հանգիստը: Թող ասոր մէջ հանէ և մեծցունէ իւր ձագերը: «Բայց մենք կը ստիպուինք դադարեցունել շէնքին գործը:» «Ո՛րքնա դադարեցունենք:»

Ճիշդ այդպէս հրաման տրուեցաւ ալ, որ դադարէր նոր սկսուելիք շէնքին գործը: Դադարեցաւ գործը, գոր-



ՇԻՅՈՒՆԻ ԲԵՐԿԸ

ած էին, և վառօդով պայթեցունելու գործը սկսուած էր: Հետեւեալ ատուատ Մր. ֆորլիս կ'անցնէր այն տեղէն ուր գործաւորք կ'աշխատէին. և ահա գործաւորաց պետը գիտնալով Մր. ֆորլիսի դիրտաղած և փափուկ սրտի տէր ըլլալը, կանչեց անոր ըսելով. «Եւ այն է Մր. ֆորլիս, հոս թուշուների բոյն մը գտանք և պիտի աւրուի այն:» Յուցուց անոր թուշուն մը որ նստած էր հաստատուն և ըսաւ կերպով շինուած բոյնի մը վրայ որ կը գանուէր ժայռին ձեղբուածներէն մէկուն մէջ՝ մացաւներէ չըջապատեալ: Թուշունը մէկդի թուա իւր բոյնէն երբ մարդը մտեցաւ իրեն, և յերևան եկան հինգ հասկապատիկ հաւկիթներ որ նոր ածուած կը թուէին:

Ժայռը գրեթէ պարագ մնացին, բայց նոյն ժամանակը կ'ընդունէին իրենց օրականները: Իսկ թուշունը կը նստէր իւր բոյնին մէջ մեծ ուշադրութիւն ընելով իւր շուրջը անցած դարձած բաներուն, և անոր կերակուրը կը բերէր իւր բնիկը: Ի վերջոյ ձագերը երան հաւկիթներէն: Եւ յետոյ գէթ երեք չաբաթներ ևս անցան, մինչև որ ձագերը կարող եղան թռչել:

Մր. ֆորլիս յաճախ կ'այցելէր բոյնը, ոչ թէ անհամբերութեամբ և սիրտը նեղանալով որ թուշունը և անոր ձագերը տակաւին հոն կը մնային, այլ անկեղծ համակրութեամբ դիտելով ձագերուն հետզհետէ մեծնալը: Մեծ թուշուններուն թող տրուեցաւ մնալ բոյնին մէջ որչափ ժամանակ որ ուզէին. և երբ ի վերջոյ արձակեցին բոյնէն իրենց ձագերը՝ կարող տեսնելով զանոնք թռչելու և իրենք իրենք հոգալու, այն ատեն հրաման տրուեցաւ.

նորէն սկսել շէնքին գործը , և ժայ-  
ռերը պատառող վառօդին պայթման  
ձայնը լուսեցաւ այն ատեն միայն՝ երբ  
թռչունը հեռացած զացած էին անկէ :

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՔ

Ինչպէս յԱմերիկա նոյնպէս նաև  
յԱստորալիա բոլորովին արտաքսուած  
են անոնց նախկին բնակիչք յիշեալ  
ցամաքներուն մեծ մասերէն . և անոնց  
անդերը գրաւած են սպիտակամորթ  
գաղթականք : Վայրենիք ժամանակա-  
կը կարգաւորին և կը սպաննէին սպի-  
տակամորթները . և ասոր փոխարէն  
սպիտակամորթք միտքանելով կը հա-  
լածէին զանոնք իբրև վայրի գազաններ  
և կը սպաննէին թէ՛ յանցաւորները  
և թէ՛ անմեղները : Այսպիսի կռուոյ  
մը միակ արդիւնքը կըլլայ սկիւրա-  
գոյն կողման ջնջուիք :

Բայց Աւստրալիոյ մէջ տեղ տեղ  
գեռ մնացած են նախկին թխա-  
գոյն բնակիչներէն : Պատկերին  
մէջ կը տեսնուի անոնց գիւղերէն  
մին : Այդ հետաքրքրաշարժ ար-  
նակները կը գտնուին Հիւսիսային  
Աւստրալիոյ ցեղերուն մէջ : Կը  
տեսնենք որ մարդուն մէկը կը նը-  
կարէ վահանի մը վրայ . մարդիկը  
բոլորն ալ գրեթէ մերկ են :

Այս բնիկք սուր տչքով կը գի-  
տեն բնութիւնը և հաշակաւոր են  
հետքեր գտնելու մասին : Գիւ-  
րաւ կը տեսնեն ճիւղի մը կտա-  
րած ըլլալը , խտտին ճնշուած  
կամ քարի մը տակը վրան դար-  
ձած ըլլալը , մինչ այսպիսի բա-  
նէր կարող չէ նշմարել եւրոպա-  
ցի մը : 1880 ին խումբ մը աւա-  
զակներ շատ ֆլաաններ հասցո-  
ցին Վերթօրիս գաւառին մէջ .  
կը փախչէին անտառները և միշտ  
կը յաջողէին ի դերև հանել ու-  
տիկանութեան հանձարը : Որոշ-  
ուեցաւ ստիկանութեան օգնական առ-  
նուլ բնիկներէն , և այս մարդոց հան-  
ձարին շնորհիւ աւազակները չուտով  
ձեռք անցան և սպաննուեցան :

ՏՂԱՅՈՅ ԽՕՍՈՒՍԾ ՔՍՐՈՁ ՄԸ

«Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ  
է , շատի մէջ ալ հաւատարիմ է »  
Ղուկ . ԺԶ . 10 :

Աղէկ է որ ամէն տղայ բերնուց սոր-  
վի այս բնաբանը և գրուցէ ամէն օր :  
Ինչո՞ւ համար աղէկ է : Վասն զի այդ  
կ'օգնէ ձեզ ըլլալ հաւատարիմ ձեր  
հիմնկուան կատարելիք փոքր գործե-  
րուն մէջ , և այսպէս կը պատրաստէ  
զձեզ ըլլալ հաւատարիմ այն մեծ բա-  
նէրուն մէջ որոց պիտի հանդիպիք  
հետոջեան : Այդ օրհնութիւն մը պի-  
տի ըլլայ ձեզի ձեր բարբ կենաց մէջ ,  
վասն զի հաւատարիմ արք և կանայք  
են որ կը յարգուին ուրիշներէ և պա-  
տիւ կը գտնեն Աստուծոյ առջև :

Աղջիկներ , հաւանականապէս ձեռնէ  
անանք լսած են Ֆրերէնա Նոյթիկնէլի

վրայով : Պէտք է դիտնալ որ նա պատ-  
ուով կը յիշուի ամէն անգ բոլոր աշ-  
խարհի մէջ . վասն զի կարող եղաւ օգնել  
Անգղիացի դիմուորայ երբ տեսուչ էր  
հիւանդանոցներու վրայ Խրիմու պա-  
տերազմին ատենը : Ինչո՞ւ համար նա  
կարող եղաւ այս մեծ գործը կատա-  
րել այսպիսի հաւատարմութեամբ :  
Վասն զի երբ աւելի դեռահասակ էր ,  
առիթով մը սորվեցաւ հիւանդապա-  
հութիւն , և հաւատարմութեամբ սոր-  
վեցաւ : Որովհետև քիչ բանի մէջ հա-  
ւատարիմ եղած էր , կարող եղաւ շա-  
տին մէջ ալ հաւատարիմ ըլլալ :

Տղաք , դուք ամէնքդ ալ լսած էք  
Էտիւանի , Էլեկտրականութեան մէջ  
մեծ գիւտեր հնարող անձին , վրայ :  
Ի՞նչպէս եղաւ նա այդպիսի մեծ մարդ-  
մը : Վասն զի երբ էր երկամիտ դ-  
եայ վրայ լրագիրներ ծախող տղեկ մը ,

նէք : Թերևս ձեզի այնպէս թուի թէ  
շատ սարբերութիւն չընեն եթէ վաղն  
առաւօտ ըսէք ձեր աղօթքները կամ  
ոչ , եթէ փոքր մաս մը կարողաք ձեր  
Սուրբ Գիրքերէն կամ ոչ , եթէ աշ-  
խատիք Աստուծոյ համար ապրել կամ  
ոչ : Բայց իրօք մե՞ծ սարբերութիւն  
կ'ընէ : Եթէ հիմա հաւատարիմ ըլլալք  
այս բաներուն , պիտի մեծնաք ըլլալու  
բարի , ճշմարիտ Գրիստոնեայ այրեր և  
կիներ . և միշտ պիտի յարգուիք ու-  
րիշ մարդոցն և պատիւ պիտի գտնէք  
Աստուծոյ առջև :

ՀԱՌԱՏԱՐԻՄ ԹԻՐԿԱՀԱՐ ՏՂԱՆ

Պատմութիւն մը կայ թմբակահար  
փոքրիկ տղա մը վրայ որ ասկէ շատ  
ժամանակ առաջ Անգղիոյ քաղաքական  
պատերազմներէն միայն ատենը գերի



ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՔ

բանուեցաւ ապստամբաց խումբէ մը :  
Ոպտամբք իրենց մէջ առին զնա և  
հրամայեցին որ հնչեցունէր իւր թրձ ,  
բուկը իրենց համար այ : «Բա՛ւ լիցի ,  
որ թագաւորին թմբակը երբեք գոր-  
ծածուի անոր թշնամիներուն համար ,»  
լսաւ քաջ տղան , և իմպուկը գետինը  
զարնելով սաքին տակն առաւ և ջախ-  
ջախեց զայն : Ոպտամբները իրենց  
բարկութենէն կրակ կարած , սպաննե-  
ցին տղան այն տեղը : Բայց կարող չե-  
ղան չպատմել անոր քաջարի և հաւա-  
տարմութեան խօսքերը և բրածը յա-  
մօթ և ի նախատինա իրեանց , այնպէս  
որ սերունդէ սերունդ զրուցուի մինչև  
մեր օրերը :

Կ'ուզէ՞ք այս տղէն նուազ հաւա-  
տարիմ ըլլալ Յիսուս թագաւորին :  
Թերևս բնաւ հարկ չըլլայ ձեզի մեռ-  
նիլ Անոր համար , բայց նա կը պատ-  
ուիրէ ձեզի ապրել իրեն համար : Թրձ-  
բուկին ձայնը ապստամբներուն սիրտ  
պիտի տար յառաջ քաղերու , և խրա-  
խայս՝ կուտելու թագաւորին դէմ՝ ու-  
րում կը վերաբերէր տղան , և սրում  
նա խոտաւայած էր ծառայել . և տղան  
հաւատարիմ գտնուեցաւ և ի դերև  
հնչ օր Աստուած կ'ուզէ որ դուք ը-

առիթով մը սորվեցաւ թէ հեռագիրն  
ինչպէս կը գործէր , և ուսման նիւթ  
ընելով՝ հմուտացաւ անոր իւր բոլոր կա-  
րողութեամբ : Էտիւան հաւատարիմ ե-  
ղաւ կատարելու այդ փոքրիկ բանը  
գոր շատեր որ անոր նման ունեցած  
էին առիթ , անցած էին առանց տես-  
նելու զայն . և սրովհետև նա հաւա-  
տարիմ եղաւ այն ատեն փոքրիկ բա-  
նին մէջ , այժմ կարող է կատարել մեծ  
բաներ :

Չենք կրնար ակնկալել ձեռնէ թէ  
դուք ամէնքդ ալ պիտի մեծնաք Նոյ-  
թիկնէլի կամ Էտիւանի չափ , սրչափ  
հաւատարիմ ըլլաք ալ . բայց , ողբք ,  
վատա՛հ եղէք որ եթէ դուք հաւատա-  
րիմ ըլլաք այն բաներուն մէջ զորս  
կատարելու և սորվելու էք ձեր սու-  
ները կամ դպրոցները , այդ հաւա-  
տարմութիւնը պիտի օգնէ ձեզի բոլոր  
ձեր կենաց օրերուն մէջ :

Կայ բան մը որոյ մէջ պարտիք չա-  
ղուշաւոր ըլլալ որպէս զի կարենաք  
հաւատարիմ ըլլալ , եւ այն է ընել  
ինչ որ Աստուած կ'ուզէ որ դուք ը-

Թիւնք: Աստուած ձեզի աւելի շատ բաներ տուած է քան որչափ այն թմբկահար տղան ընդունած էր իւր թագաւորէն: Չեզրի տուած է ձեր կեանքը, ձեր ձայնը, ձեր ձեռուրները, ոտուրները, և ձեր սաղանդները: Կ'ուզէ՞ք անոր այս պարզ և ներքին գործածել Սատանային, անոր և ձեր թրշնամոյն, ծառայութեանը համար, թէ ըսել ամէն օր, «Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: Կ'ուզէ՞ք դպրոցին մէջ կամ խաղի ժամանակ, տունը կամ դուրսը ջանալ ընելու ինչ որ հաճոյ է թագաւորաց Թագաւորին:

Ասկէ քիչ առաջ տղայ մը ըսաւ իւր ընկերներէն մէկուն համար, «Ես վատահամ թէ ձոն ֆրիստոնեայ է»: «Ինչո՞ւ համար այդպէս կ'ըսործես»: «Վասն զի խաղի մէջ աղէկ կ'ըսործի»: «Ի՞նչ պէս»: «Ո՛հ, նա միշտ չփնտռեր ամենէն աղէկ տեղը. թող կու տայ որ ուրիշ տղաք ալ ընտրեն իրենց համար զիբը խաղի մէջ, նաև հիմա չբարկանար ինչպէս առաջ»:

Այո, տղաք, դուք խաղի ժամանակ ալ կրնաք ցուցնել թէ ինչ էք, կրնաք լուծել դժուարին խնդիր մը կամ սորվիլ դժուարին դաս մը իբրև ֆրիստոնեայ զինուոր: Կրնաք քաջութիւն ունենալ ուղիղ գործելու երբ կ'ըսործուի ձուռ գործելու: Կրնաք քաջութիւն ունենալ միայնակ կենարտ երբ ձեր ընկերները իրենց բերաններէն կ'ըսեն նախ և պիղծ խօսքեր, կ'արեն հիբակին, և անզգամութիւններ կ'ընեն: Ո՛հ, ասոնք կրնան ըլլալ զօրաւոր փորձութիւններ, բայց ամէն վարկեան հնար է այդօր մը վերառաքել մեր Թագաւորին որպէս զի օգնէ ձեզի երբ պաշարուած էք ձեր թշնամիներէն. և նա պիտի զրկէ օգնութիւն և ձեզի կարողութիւն պիտի սայ յաղթելու:

ԽՕՍԳ ԱՌ ՏՂԱՅՍ

Միշտ կը գտնուին տղաք որ կը նեղեն տարօրինակ կերպարանք ունեցողները՝ մինչ արդէն կը բաւէ ասոնց նեղութիւնը իրենց: Բայց, տղաք, խորհեցէք որ դուք ալ կրնայիք ըլլալ ասոնց պէս: Խորհեցէք այս բանին վրայ և եղէք անոնց քաղցր փոխանակ ըլլալու անդամ: Ես ձեզի ընեմ ճշմարիտ պատմութիւն մը խեղճ մարդու մը վրայ որ կը բնակէր Լոնտոնի աղքատիկ փողոցներէն մէկուն մէջ: Տարօրինակ կերպարանք մարդ մըն էր նա բայց մէկուն վաս չէր ընէր: Կ'երևէր թէ խելքը լման չէր. չունէր ազգականներ որ հոգային զնա կամ զթային իրեն. բայց ինք կը ջանար ձեռք բերել իւր պարուտը, ծախելով գաւազաններ, տղայոց խաղալիկներ, և ամէն ինչ որ կրնար ընել քիչ մը ստակ շահելու համար: Համեստ էր և գոհ կը թուէր երբ իւր յաճախողներէն լսէր քաղցր կամ քաղաքավարական խօսք մը: Բայց քաղաքին այն թաղի տղաք կ'երևէր թէ մասնաւոր հակակրօթիւն մը ունէին անոր դէմ: Կը նախատէին

զնա, խրամներու մէջ կը զրորէին, կեղտ անուաններ կու տային անոր, կը գողնային անոր ծախելու բաները: Երբեմն կը բարկանար խեղճը և կը փորձէր պատժել զանոնք. երբեմն կու լար: Բայց տղաք այս բաները տեսնելով ընդհակառակն աւելի կը ծիծաղէին անոր վրայ: Առաւօտ մը գանուեցաւ որ ինքզինք կախած էր իւր աղքատիկ սենեկին գերաններէն մէկէն, իւր պատառատուն գրպանին վրայ գնտանելով փակցուցած՝ կտոր մը թուղթ որոյ վրայ գրուած էր սա խօսքերը. «Տղաքը զիս շատ կը ձանձրացունեն, վասն որոյ ա՛լ չեմ կրնար ճարել ապրուստ. ա՛լ չեմ ուզեր տարիլ»: Ճոն Ուինթըրը»:

Կառավարութեան կողմէն զրկուած քննիչը վճռեցին թէ «մարդը անձնասպանութիւն ըրած էր խելքաւորութենէն», բայց ճշմարիտ սա էր որ Լոնտոնցի այն տղաքը պատճառ եղած էին մարդուն մահուանը: Կը խնդրեմ որ յիշէք խեղճ Ճոն Ուինթըրը երբ պատահիք տղայ ամբոխի մը որ կը նեղեն խեղճ, անօգնական անձ մը և չհակամարտէք միանալ անոնց հետ: Կ'ուզեմ որ ըսէք ձեր անձերուն ճիշդ հիմա տակուին այս թերթը վարչապետ. «Ես այսուհետև բնաւ պիտի չընեմ դժբաղդ անձ մը աւելի թրշնուռ՝ նախատելով և նեղելով զնա»:

ՈՐՈՐԱՆ ԵՒ ԴԱԳԱՂ

Կենաց մէջ բազմաթիւ տեղեր կան հանգստեան, բայց ո՞վ չգիտեր այն երկու նշանաւորներն, որոց մին կը կենայ կենաց սկզբնաւորութեան ասանդուխտին վրայ, և միւսը՝ կենաց վերջաւորութեան սանդուխտին վրայ. տարբեր, ո՞հ, խիստ տարբեր:

Որորանն փայտէ շինուած է, նոյն պէս և դագաղն:

Ժամանակաւ անտառին մէջ կը կանգնէր ծառ մը, որմէ կ'առնուէին փայտեր, կը տարածուէին նորա թժարմ և կանանչ ճիւղերը, որոց շուքին տակ կը հանդստանար յոգնած օտարականը կամ ճարտորդը: Վերջապէս օր մը ծառը կարուելով նորա փայտերէն ուրորան մը և միանգամայն դագաղ մը շինուեցաւ:

Որորան և Դագաղը — Երկուքն ալ ժամանակաւ կ'աճէին իբր զօրաւոր կաղնի կամ ծառ անտառային, որոց ճիւղերուն վերայ թռչունք կ'երգէին, գարնան ատեն երկուքն ալ կը կանանչան և անան ժամանակ կը թառամին, երկուքն ալ կ'իջնան փոթուրիկներէ և երկուքն մէջ ևս կը ննջէ մարդս: Երկուքն մէջ ալ կայ հանգրատութիւն և ուրախութիւն. երկուքն մէջ ևս մեք մեզմէ կարող չենք մանել, այլ ուրիշները անոնց մէջ կը դնեն զմեզ: Ի մանկութեան կը խրնդրենք մեր մօրմէն ինչ որ կ'ուզենք, նաև հանգստանալ. նա կ'առնու զմեզ իւր բազկաց մէջ և սիրով կը դնէ ու

որորանն մէջ: Տժգոյն, անշարժ և զուրկ զօրութենէ՛ ի մահ կ'ընչենք, յայնժամ դագաղին մէջ կը դնեն զմեզ, վասն զի մենք կարող չենք ինքնին մտնել հոն:

Որորան և Դագաղը — Երկուքն վերայ կու լան կ'ոտքան մարդիկ. ո՞վ չգիտեր ուրախութեան արտասուքներն որ մօր մը կամ հօր մը աչաց մէջ կը փայլին երբ մանկան որորանն մէջ կը կը նային: Նմանապէս ո՞վ չգիտեր ցաւոց արտասուքներն որ զաւակաց աչքերէն կը հոսին երբ կը կենան իրենց ծնողաց դագաղին քով: Ծնողք իրենց որդիքն որորանն մէջ կը դնեն, և շատ անգամ որդիք ևս իրենց ծնողքը դագաղի մէջ: Հոս կայ արտասուք որպէս և հոն:

Որորան և Դագաղը — Երկուքն համար ևս կ'աղօթենք. ուրախ խորհուրդ և փափաք և զգացմունք կը բարձրանան դէպ յերկինս ծնողաց սրտերէն, երբ կը կենան մանկան որորանն քով: Կ'աղօթենք առ Աստուած մանկան բարեխաղութեան և օրհնութեան համար: Նոյնպէս կ'աղօթենք մարդիկ դագաղին քով. կ'աղօթեն իրենց համար, կ'աղօթեն այլոց համար:

Որորան և Դագաղը, թէ մտ թէ հեռի, երկուքն ալ որորաններ են. մին՝ երկրի համար, իսկ միւսն՝ երկնից համար:

Թարգմանեց Գերմաներէնէ ՎԱՀԱՆ Յ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՀԱՆԵՆԼՈՒԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

ՍՈՂԱՄՈՆԻ ՄԻ ԱՌԱԿԸ

- Ես կը բազկանամ յիսուն և և չորս տասերէ. իմ 11. 24. 7. 31. 22. Մեռեալ մը որ ողջնացուց ուրիշ մեռեալ մը: իմ 48. 9. 3. 14. 2. 8. Հեթանոս թագաւոր մը Տերօջէ օժուած: իմ 20. 35. 54. 38. 44. 28. 6. Դաւթի տառուերկու զօրապետաց մին: իմ 31. 25. 49. 29. 45. 35. 17. 7. Փրկչին մեղք անուանեցին մին: իմ 5. 52. 33. 26. 43. 1. Աքք միայն ունին: իմ 37. 30. 12. 41. 43. Պարսից հին թագաւորաց մին: իմ 46. 42. 32. 20. Յօգեփ տեսաւ երազին մէջ: իմ 40. 2. 36. 14. 23. 4. Կենսապահի ունգ մը: իմ 49. 51. 38. 39. 21. Ժամանակի բաժանում մը: իմ 27. 43. 47. 40. Անշրտական քաղաք մը ծովեզերեայ: իմ 46. 54. 50. Նախեղի մը: իմ 48. 53. Երածշտական ձայնի աստիճան մը: Պրուսա 804. ՍԵՓ ՀԱՅԱՆԱՆ

Ամերիկայի Մեծնորայ ընկերութեան կողմէն, Արտօնատէր Զ. Գ. ԿՐԻՆ, Տնօրէն — Խմբագիր Ս. ՊՈՒՆԸՍ, Յիմնանորար Եօզուշու Սեփեպան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի 89ԱՐԱՆԻ Ա. ՅԱՎՈՐ (ՊՈՍՏԱՅԻՆ)